

դիմակաւորներուն չխաբուելով դիմադրելոյ՝ եւ ապա ներքին գործոց եւ վարչութեան մէջ յառաջադիմական զարգացմանց հետեւելով կենցաղօգուտ եւ ազգօգուտ կարեւոր բարեփոխութիւններ եւ բարեկարգութիւններ յարգարելոյ եւ արդիւնաւորելոյ համար:

Բարձիստութիւնը կրօնի եւ եկեղեցւոյ էական մասանց վերայ տարածել ջանալն՝ Ազգի գոյութեան եւ մեր լեզուի եւ այլ ամեն էական յատկութեանց նկատմամբ տարբեր կերպով մտածելով եւ է մ յուշան կամ համաշխարհական համար պատասխան գաղափարով մտածելն՝ պարզապես ոչ այլ ինչ կնշանակեն՝ եթէ ոչ Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ գոյութիւնը ի վտանգի գնել եւ ի կորուստ գլորելոյ առաջնորդել:

Տակաւին չմանրամասնեցի եւ ոչ առայժմ հարկ կտեսնեմ այլ եւ այլ տեսութեամբք մանրամասնել եւ բացատրել օտար ազգերէն օրինակ եւ փոխառնուելիք ընդարձակ բարեկարգութեանց այն ամեն գժուարութիւնքը եւ անպատեհութիւնքը՝ որք իւրաքանչիւր ազգի գրութեան՝ յատկութեանց եւ կարօտութեանց համաձայն հիմնեալ եւ արդիւնաւոր լինելով խառնուրդ եւ անխոհեմ բազագրութիւնն անշուշտ մեզ վնասակար եւ վտանգաբեր լինել կարող են, եւ փորձառու ուշադրութեամբ հատընտիր ծաղկաքաղ եղած միջոցում անշուշտ օգտաւէտ կլինին. որոյ համար անշուշտ հարկաւոր է Ազգային Հայկական ողջամիտ եւ անխարդախ դաստիարակութեան ուշադրութիւն տալ եւ զայն ընդհանրատարած արդիւ-

նաւորել, եւ գաղափարական համաձայնութիւն եւ նպատակաց հայկական ներդաշնակութիւն հաստատելով՝ ըստ այնմ կարօտութիւն տեսնուած ուրիշ վարչական եւ այլ կազմուածոց մէջ ներելի բարեփոխեալ բարեկարգութիւնքը խորհել եւ միաբան գործադրել:

Եւ այսպիսի գեղեցիկ ուղղութեան եւ նպատակի համար ոչ մի ողջամիտ եւ բարեհախանձ Հայ իւրովսանն աշխատութիւն եւ ջանք չպիտի խնայէ տակաւ առ տակաւ՝ բայց յարատեւ եւ անվհատ գործելով:

Ա. Ե. Մ.

ԱՐԴԵՈՒ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՐԿԱԿՈՎ ԷՐ ԱՍՏՈՒՑԱՑԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Երբ որ մարդն պատուիրանազանց զըտնուեցաւ Աստուծոյ առջեւը՝ եղծեալ խանգարեցաւ նորա բնութիւնը և եղաւ անզերձ պարտաւոր Աստուծոյ։ Առա համար հարկաւոր էր անշուշտ ընտրել երկուքից՝ մինը, կամ մնալ յաւիտեանս Աստուծոյ բարկութեան և դատաստանի ծանրութեան ներքոյ, և կամ ինքեան Աստուծոյ հարկ էր ցուցանել մի սքանչելք և ամենամեծ հնար մարդոյ փրկութեան համար։ Աւստի առ սէր մարդկային փրկութեան ինքն Աստուծ բարեհաճնեցաւ ընտրել վերջինը։ վասն զե նա չէ կամենում մեղաւորի մահն, ոյլ կամենում է որ ամեն մարդ ապրի և գոյ գեպի ի ծշմարտութեան զիտութիւնը։ Որոյ համար զեսի յաւիտենից և յառաջ քան զյաւիտեանս՝ ինչպէս որ կամ, Պօղոս առաքեալը,

թէ՝ երբ խորհեցաւ Աստուած ստեղծագործել զմարդն, մի և նոյն ժամանակ հածեցաւ և փրկել զնա ի դեպս անկման նորա, և այս միջոցը ընտրեց նա ի սկզբանէ»:

Այս իւր անվախճան և անհասանելի իմաստութիւնը ի կատար ածեց խորհրդով Երկք Աստուածային Ենձանց, այն է՝ Հօր, Որդոյ և Հոգւցն սրբոյ՝ մարդոյ փրկութեան համար, և նախընտրութեամբը, ուրը սուրբ զրոց մէջ անուանուում է «կանխաղիտութիւն Աստուծոյ», նախատեսութիւն և նախասահմանութիւն. խորհուրդ կամաց Աստուծոյ. խորհուրդ՝ լոեցելոյ ժամանակօքն յաւիտենից. ծածկեալն ի յաւիտեանց և յազգաց և մինչ անդամ յերկնաւոր իշխանութեանց և պետութեանց»: (Գոռչ առաջ. Ի. 23: Երէն. Ա. 9: Հայէն. Ճ. Դ. 23: Կողմ. Ա. 26: Պէտ. Ա. Ռուղի, Ա. 19 և 20:)

Աստուած այս ամենաբարի խորհուրդը երկնեց, նախ՝ սիրոյն համար, զոր ուներ առ ստեղծած մարդը, որ շարժեց զԱստուած յայտնել իրեն փառքը իւր արարածներին ստեղծագործութեամբը և մանաւանդ մարդկային ազդի փրկութեամբը: Աորա համար է, որ Պօղոս առաքեալը կը զբէ, «Աստուած կամեցաւ փրկել զմեզ միայն ի զովեստ փառաց իւրոց»: (Երէն. Ա. 6, 12 և 14). և ինքն Յիսուս Քրիստոս մեր փրկութեան գործը կատարելէն յետոյ՝ ասաց. «Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ և Աստուած փառաւորեցաւ ի նմա» (Յահ. Ճ. Վ. 31). և կազօթէր առ Հայր ասելով, «Ես զքեզ փառաւորեցի յերկրի, զդործն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից»: (Յահ. Ճ. Ե. 4:): Երկրորդ՝ Աստուծոյ սէրը առ մարդն

անսահման է, ըստ Աւետարանի. «Այսպէս սիրեաց զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ես»: և ինչպէս որ կըզրէ Պօղոս Առաքեալը, «Աստուած՝ որ մեծն է ողորմութեամբ՝ վասն բազում սիրոյն իւրոյ, զոր սիրեաց զմեզ, մինչզեռ մեռեալ էաք ի մեզս մեր, կենդանիս արար զմեզ ի Քըրիստոս Յիսուս, զի ցուցցէ ի յաւիտեանսըն՝ որք զալոց են զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ ի մեզ ի Քըրիստոս Յիսուս»: (Երէն. Ի. 4, 5, և 7:):

Ոչ միայն Աստուծոյ սէրը՝ որով հածեցաւ փրկել զմարդն՝ անվերջ է և անսահման. այլ նաև սրբութիւնը, ծշմարտութիւնը և իմաստութիւնը: Աւստի այս գործը պարզօրէն կատարուիլ կարող չեր, և հնար չեր և առանց մէկ դաշնաղրութեան ազատել զմարդն իւր մեղքերից: Խնչպէս Աստուծոյ ամեն գործողութեանց մէջ, նոյնպէս և յայսմ մասին առաւել պէտք էր՝ որ ողորմութիւնը ծշմարտութեան հետ պատահի, և արդարութիւնը խաղաղութեան հետ համբուրուի, Դաւիթթ մարդարեի ասածին պէս:

Այսու օրինակաւ մարդկային փրկութեանը համաձայն լինելու համար որչափ ըստ սիրոյն Աստուծոյ, այնքան և սրբութեան, ծշմարտութեան և իմաստութեան, հարկաւոր էր, նախ՝ կատարել պատուիրած արդարութիւնը, և մատուցանել նըմա այնպիսի զոհ, որը հաւասարելով մարդկային սեռի մեղաց անչափ ծանրութեանը հետ՝ կարողանար կատարելապէս ազատել զմեզ ամեն մեր մեղքերից: Երկրորդ՝ ուղղել մարդկային բնութիւնը, զարձնել նորան դէպ ի յառաջազդոյն ունեց ած

կատարելութիւնը և աստուածանմանութիւնը, և ծագել նորա մէջ լոյս՝ զօրութիւն և կեանք, որից նա զբկեցաւ ի ձեռն մեղաց իւրոց։ Երրորդ՝ ջնջել սատանայի դորձքերը և կատարելապէս յաղթելով նորան՝ սրբել ընդհանուր աշխարհից մեղաց հետքերը լցնել նորա թերութիւնները և բովանդակել զամենայնն յամենայնի ըստ առաքելոյն Պօղոսի. (Եկե., Ա. 10, 22 և 23.):

Որովհետեւ մարդն՝ որպէս սերունդ Եղամայ կարող չէր ի կատար ածել և ոչ մինը այս զաշնազրութիւնից՝ ոչ միայն բոլոր մարդկային ազգի փրկութեան համար, այլ նոյն խսկ իրեն անձին համար. ուստի հարկաւոր էր սորա համար միջնորդութիւն այնպէս մէկ այլ անձի, որ կարողանար փոխանակ մարդոյ յանձն առնուլ կատարել այդ զաշնազրութիւնը։

Ո՞ւ էր ուրեմն մեր այդ միջնորդն ու բարեխօսն։

Եստուածային յայտնութիւնը կը ծանուցանէ մեզ Եսայի մարդարէի ձեռքովը, թէ «ոչ պատզամաւոր ոք էր և ոչ հրեշտակ, այլ ինքն Տէրն փրկեց զմեղ»։ այն է՝ երկրորդ անձն ամենասուրբ Երրորդութեան՝ միածին Որդին Եստուածոյ, ինչպէս որ կը զրէ Յովհաննէս աւետարանին։ Եյնպէս սիրեաց Եստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն՝ որ հաւատայ ինա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս»։ (Յով. Վ. 16.):

Եյս հաշտութենէն առաջ ընկած մարդոյ շետ՝ որպէս նաև երկրորդ օրէնքէն առաջ ամենասուրբ Երրորդութեան յաւիտենական խորհրդոյ կար արդէն Եստուածոյ

Որդւոյ միջնորդութիւնը մարդոյ համար, և Նօր աստուածոյ ներքին խաստումն՝ որով Նայրն Եստուած յայտնեց իրեն կամքը փրկելու զմարդն, տուաւ իւր որդւոյն պատուէր կատարելու իւր այս կամքը. և Որդին Եստուած ընդունելով այս պատուէրը՝ յանձն առաւ զալ և կատարել իրեն Նօր կամքը։

Նօր Եստուածոյ այս պատուէրը Որդւոյ հետ նկարազրում է Դաւիթիթ իւր Սաղմոսին մէջ, յորում կը ներկայացնէ զՈրդին Եստուածոյ՝ պատօղ զՆօրէ, ասելով. «ընդ զոհս և ընդ պատարազս ոչ հաճեցար, լսելիս հաստատեցեր ինձ և զ' վասն մեղացն ոչ խնդրեցեր. յայնժամ առացի՝ ահաւասիկ դամ առնել զկամս քոյ Եստուածիմ»։ (Ասպ. 1. Ճ. 7—9). և մարդարէն Եսայի, թէ «Եւ խրատ Տեառն բանայ զականջո իմ և ևս ոչ խստանամ և ոչ ընդգէմ դառնամ։ Զմիկունս իմ ետու ի հարուածս, զճնօսս իմ ի յապտակս, ևլն»։ (Ես. Յ. 5—7):

Եյս պատուէրը շատ տեղ կը կրկնէ ինքըն Որդին Եստուած ասելով. «Ես զնեմ զանձն իմ ի վերայ ոչխարաց, զի միւսանգամ առից զնա Զայս պատուէր առի ի Նօրէ իմմէ . . . ևլն»։ (Յով. Ճ. 17, 18. Ճ. 49, 50. Ճ. Վ. 31), Աւստի և Եստուածոյ Որդին անուանւում է միջնորդ մեր, երաշխաւոր նորոյ ուխտի, և նոր Եղամ, այս ինքն, երեւեան խոստացեալ օրինօք Փրկին ամենայն մարդկան»։ (Ե. Տէ. Բ. 5; Եբ. 1; 22. Ը. 6; Ե Կոդ. Ճ. Ճ. 45):

Երկրորդ օրինաց պատուիրանը անուանւում է շնորհաբաշխութիւն, վասն զի նորանով յայտնուեցաւ անակնունելի և

անձառելի սերն Աստուծոյ առ մարդն, Պօղոս առաքելոյ ասածին պէս. « Եստութիւն և լիութիւն շնորհաց ։ օր Աստուծոյ, Որդւոյն Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ առ մարդն, զյայտնեալն ոչ միայն ձրիաբար, այլ յայնժամ երբ մարտնչեր արժանի այդպիսի շնորհաց, այլ ընդհակառակն որպէս մեղաւոր պարտ էր մնալ ընդդրաբկութեանն Աստուծոյ և դատաստանի նորա» . (Հայութ. Ե. 8: Խէմ. Ե. 7. Ի. 4 և 5): « Նա զանազանուում է սկզբնական օրէնքից նորանով, որ առաջին օրէնքն յայտնութիւն էր և անընդիմջական հազորդակցութիւն Աստուծոյ հետ. իսկ այս օրէնքն՝ հաւատոյ, ի միջնորդն և ի բարեխօսն փրկութեան. այն տեղ իրական զբւարձութիւն էր զբախտին երջանկութեամբ, իսկ այս տեղ պարզեած էր միայն յոյս ապագայ երջանկութեան: Եյնու ամենայնի երկրորդ օրէնքը ունի և իւր գերազանցութիւնը. այն տեղ մարդն Աղամ դաշնաք էր կապում ։ օր Աստուծոյ հետ մեր ամենին համար. իսկ աստ Որդին Աստուծած լինում է հաստատուն երաշխաւոր. այն տեղը էր զբախտ երկրային, իսկ այս տեղ խոսառումն երկնային, ըստ Յովհաննու. « Ի տան ։ օր իմոյ օթեանք բազումք են» . ուրեմն մեք ըստ անպատճելք սիրոյն Աստուծոյ սաացաք Քրիստոսի փրկազրծութեամբը նոյնչափ՝ որչափ որ կորուսած էինք Եղամայ անկման պատճառաւը:

« Նորհաբաշխութեան օրէնքը ընդհանրական է, այսինքն կտարածուի Եղամայ ամեն սերնդի վերայ առանց խորութեան, սորա համար ևս վրկութեան շնորհաբաշխութիւններն պատրաստուած, նախա-

սահմանուած են և կը շնորհուին ամենուն: Եւ նախ՝ այս բանն անտարակոյս իմն եղանակաւ կը հաստատէ, սուրբ զիրքը ասելով. « Աստուծած կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն» . ինչու որ Աստուծոյ մօտ աշառութիւն չկայ. և նա է Աստուծած ոչ միայն ։ ըրէից, այլ և հեթանոսաց: Երկրորդ՝ նոյնակն այսմ՝ կը վկայէ նաև արժանաւորութիւն մեր փրկութեան միջնորդին կամ բարեխօսին, վասն զի նա մեղ նման հասարակ ստեղծուած չլինելով, այլ է միածին Որդին Աստուծոյ, նորա արժանիքը բաւական էին մարդոյ փրկութեան համար, ինչպէս որ Պօղոս առաքեալը կը վկայէ. « Օ, ի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան շնորհօք միոյն մարդոյ՝ Յիսուսի Քրիստոսի ի բազումն առաւելաւ» . (Հայութ. Ե. 15):

Երրորդ՝ ինքն Տերն մեր Յիսուս Քրիստոս կը սովորեցնէ, մեղ թէ ինքն եկաւ աշխարհը փրկելու. և Յովհաննէս առաքեալը կատ թէ. « Նա է քաւութիւն մեղաց, ոչ թէ միայն մերոց, այլ և ամենայն աշխարհի» . (Ե. Յօհ. Ի. 2): Աւստի և ուղարկուեցան առաքեալներն ընդ ամենայն աշխարհ՝ քարողել ամեն հեթանուններին: Իսկ որ ինչ կվերաբերի ունանց անհաւատութեան և կորսականը, նորա պատճառը ոչ եթէ այն էր՝ որ իբրութէ Աստուծած նախասահմանած լիներ զոմանս ի փրկութիւն և զոմանս ի դատապարտութիւն, այլ չար կամքը և խստասրտութիւնը մարդկան, ինչպէս որ կզրէ սուրբ զիրքը, (Մատ. ԵՊ. 37: Յակ. Օ. 40: Գործ. Ե. 51). որովհետեւ Աստուծած կամենալով մեր ամենին փրկութիւնը, կողահանջէ միանդամայն յօժարակամ փրկութիւն և հա-

ւատք, և չե կամենալ ոչ որին ընդ քարշ
ածել բոնութեամբ և ստիպմամբ զեսպ ի
իւր օրէնքը, որպէս զի չխանգարէ մարդ-
կային ազատութիւնը:

Դ հետեւումն միջնորդութեան Որդոյն
Աստուծոյ՝ մարդկային ազգի փրկութեան
համար իմաստումն խորհրդով Երից Աս-
տուածային Անձանց նախասահմանած էր
նոյն իսկ փրկութեան կարգը, զոր Պօղոս
առաքեալը անուանում է խնամարկու-
թիւն կամ անտեսութիւն աստուածային։
Եյս տնտեսութեան էութիւնը կրովան-
դակի յայնմ, որ մարդկային ազգը որպէս
հարկն է պատրաստուելն յետոյ ի փր-
կութիւն, ամենասուրբ Երրորդութեան
Երկրորդ անձն՝ որ էր Միածին Որդին Աս-
տուծոյ՝ Նօր Աստուծոյ կամքին համաձայն
սահմանուած ժամանակին պիտի իջնէր
երկնքից մեր փրկութեան համար, և մար-
մին պիտի առնուը Մարիամ սուրբ կու-
սէն Նողումն սրբով, պիտի չարչարուէր
մեղ համար, մահուանը պիտի համբերէր
խաչին, երրորդ օրը յարութիւն պիտի առ-
նուը, երկնքը պիտի համբառնար և պի-
տի նստէր Նօր աջ կողմը։ Ոորանից յետոյ
Երրորդ անձը ամենասուրբ Երրորդու-
թեան՝ Նողին սուրբ ի փոխարէն Որդոյն
Աստուծոյ արժանեաց պիտի իջնէր Նօր Աս-
տուծոյ կողմից և անբաժան մնալով հա-
ւատացեալնէրի մէջ շնորհաց զօրութեամբ
պիտի յատկացնէր մարդոց փրկական սուրբ
խորհուրդը, որը կատարուած էր Աս-
տուածորդով ձեռքովը։ Իսկ երկրիս վերայ
այս փրկութեան շնորհաց անկորուստ պահ-
պանութեան և անընդհատ շարունակու-
թեան համար հաւատացեալնէրն Փրկէնն,
այն է՝ յորդիս Աստուծոյ, որոնք նորա ար-

ժանիքը իրենց սեպհականացրած էին սուրբ
Նողույ շնորհիւը՝ պարտաւոր էին կազմել
ժողով հաւատացելոց, այս ինքն եկեղեցի
կամ շնորհաբաշխ արքայութիւն, որպէս
զե շահատակուելով ամենի փրկութեան
գործքին մէջ միաբանական զօրութեամբ
կատարեն յաջողութեամբ իրենց կենաց
ընթացքը և արժանանան յաւիտենական
կենաց։

ՅԵՐԵՒԱՆԵԱԾ

ԳԵՐՈՐԴ ՎԱՐԴԴԱՊԵՏ

ԱԲԱՄԵԼՔԵՐԵԱՆ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՐԵԳԱԿԻ.

Վրեգակն է զլխաւոր աղբիւրը ջերմու-
թեան և լուսոյ, որ ապքացնում է և լու-
սաւորում երկիրը, բոլոր միւս աղբիւրնե-
րը, ինչպէս են աստղերը, զիսաւոր աստ-
ղերը, մծորակները, լուսինը, նոյնպէս և
երկրային հրաշէկ մարմինները, վասուած
փայտերը, քարածուիրը, ճրագների և մո-
մերի բոցը ևլն, անում են համեմատա-
բար շատ աննշան ազգեցութիւն։ Առանց
արեգակի ջերմութեան անկարելի կիբնէր
զործարանաւոր մարմինների կեանքը երկրի
վերայ, ինչպէս կենդանիների, նոյնպէս և
բոյսերի։

Տաքացնելով մթնոլորտը զանազան
մասներում զանազան աստիճաննաւ, ա-
րեգակը ստիպում է օղին տեղափո-
խուիլ և այլպիտով յառաջնել քա-
մի. ջուրը շոգի է փոխարկում, որից յե-
տոյ զցանում են ամսպեր, անձրեւ, ձիւն,